Հավելված 10. Հայտի հետ կապված հիմնական ռիսկերը

Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը[41]	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները
Ֆինանսական միջոցների անբավարարություն	2	Դիվանագիտական դպրոցի դասախոսները հրավիրվում են արտերկրից: Համատարած թանկացումները վտանգի տակ են դնում դպրոցի ծրագրերի իրականացումը, քանի որ առանցքային առարկաների՝ պահանջվող որակավորմամբ տեղացի մասնագետներ գրեթե առկա չեն: Կանխատեսելի չեն ավիափոխադրումների և հյուրանոցային ծառայությունների մատուսման գների փոփոխությունները:	Դրույքների կանոնավոր վերանայում՝ սղաճին համապատասխան:
	4	Դիվանագիտական դպրոցի դասախոսները վարձատրվում են արտարժույթով պայմանավորված դրույքների համաձայն, իսկ ֆինանսավորումը բյուջեից ստացվում է ՀՀ դրամով: Դրամի փոխարժեքի փոփոխությունները նույնպես կարող են հանգեցնել դրամական միջոցների անբավարարության:	Ըստ հնարավորության հարկավոր է ներառել փոխարժեքի հնարավոր տատանման կանխատեսումները հատկացվող միջոցներում: